



Այունյաց երկիր

Գինը 100 դրամ:

ԵՐԵՎԱՆԻ

30 ՀՈՒՆԻՍԻ 2013Թ • № 21 (294)

www.syuniacyerkir.am

Ուրիշ ճանապարհի չկա.
Ներսիսի է լինելու հասարակ
փրկությունը, որովհետև
Ներսիսի ենք փչացած:
ՀՈՎՅԱՆՆԵՍ ԹՈՒՄՆԱՅԱՑ



Ներքաղաքային ու ներմարզային երթուղիներում ուղեվարձի բարձրացում չի սպասվում առայժմ

ՀԱՆՐԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ

Երևանում սկիզբ առած ու հաղթանակով պսակված քաղաքացիական շարժումը՝ միաված ուղեւորափոխադրումների սակագների բարձրացման դեմ, որոշակի արթնություն է հաղորդել Սյունիքի հանրությանը եւս ու փոփոխ փոփոխ փոփոխ առնչվող բազմաթիվ հարցերի: Դրանք պարզաբանելու համար զրույցի հրավիրեցինք Սյունիքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության տնօրենի եւ ճանապարհաշինության բաժնի պետ Սարիկ Աղաբեկյանին:

– Պարոն Աղաբեկյան, ինչպիսի՞ն է ուղեւորափոխադրումների ընդհանուր պատկերը մարզում:

– Երթուղու երեք տեսակ կա՝ ներքաղաքային, ներմարզային, միջմարզային: Ունենք քսանմեկ ներմարզային, տասը՝ ներքաղաքային, հինգ՝ միջմարզային երթուղի:

– Ո՞ւմ են վերապահված այդ երթուղիների սպասարկման իրականացումը եւ վերահսկումը, ինչպե՞ս է դա կատարվում:

– Ուղեւորափոխադրում կազմակերպելու իրավասությունը տրված է մարզի քաղաքապետարաններին եւ մարզպետարանին, տրանսպորտի եւ կապի նախարարությանը, իսկ վերահսկողությունը՝ տրանսպորտային տեսչությանը: Գործող կարգը սահմանվել է 2001թ., ըստ որի մարզպետարանում եւ քաղաքապետարաններում ստեղծվել են համաձայնագրված, որոնք որոշում են երթուղիները, սահմանում ուղեվարձերը, մրցույթով ընտրում շահագործող կազմակերպությունները: Որպես կանոն ամեն մի երթուղու համար մրցույթ է անցկացվում երեք տարին մեկ:

– Խոսքը վերաբերում է ներքաղաքային եւ ներմարզային երթուղու սպասարկմանը:

– Այո՛, ներքաղաքային երթուղին սպասարկում է վերահսկում է քաղաքապետարանը, ներմարզայինը՝ մարզպետարանը, որն իրավասու է վերահսկելու նաեւ ներքաղաքայինը: Իսկ միջմարզային երթուղիները վերահսկում է տրանսպորտի եւ կապի նախարարությունը: Վերջերս ստեղծվել է նաեւ մի կառույց՝ միջմարզային տրանսպորտային տեսչությունը, որը կարող է ստուգել եւ վերահսկել երթուղու բոլոր տեսակների գործունեության օրինակաչափերը:

Բնակչությանը սպասարկում են նաեւ տաքսի ծառայությունները, դրանով զբաղվելու իրավունք ունեն անհատ ձեռներեցները կամ տնտեսվարող սուբյեկտները՝ տրանսպորտի եւ կապի նախարարության թույլտվությամբ:

– Պարոն Աղաբեկյան, Դուք տիրապետո՞ւմ եք մինչեւ հուլիսի 10-ը եւ հուլիսի 10-ից հետո մարզի երթուղային երեք տեսակի համարային տրանսպորտի ուղեվարձի մասին տեղեկատվությունը:

Շարունակությունը՝ էջ 8

Կապանցի Լեւոն Աղասյանը՝ Եվրոպայի չեմպիոն

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ■ Մեր թերթի նախորդ համարում տեղեկություն էինք տարածել առ այն, որ կապանցի Լեւոն Աղասյանն Իտալիայում անցկացված 18-19 տարեկանների Եվրոպայի աթլետիկայի առաջնության եռացատկ մարզածեւում 16մ 01սմ արդյունքով դարձավ Եվրոպայի չեմպիոն:

Սյունիքում՝ Նոր սպարտուս քվո

Մարզում ներ է դրվում տարածքային կառավարման օլիգարխիկ (օլիգարխիական) համակարգ, եւ մեծ է հավանականությունը, որ մարզպետարանը կդառնա այդ համակարգի հերթական ու շարքային ենթակառույցներից մեկը

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Հայաստանի հանրապետական կուսակցության գործադիր մարմնի հուլիսի 4-ի նիստում որոշում կայացվեց Սյունիքի մարզպետի պաշտոնում նշանակել Վահե Հակոբյանին: Հուլիսի 10-ին կառավարությունը, հիմք ընդունելով ՀՀ գործադիր մարմնի որոշումը, նրան նշանակեց Սյունիքի մարզպետ: Հուլիսի 11-ին տարածքային կառավարման նախարարի տեղակալ Վաչե Տերտերյանը նորանշանակին ներկայացրեց մարզպետարանի աշխատակազմին: Նոր մարզպետի պաշտոնակալությունը տեղի ունեցավ առանց ավելորդ արարողությունների: Վահե Հակոբյանը հրաժարվել էր մարզի սահմանափակ եւ կապանի մատույցներում իրեն դիմավորելու միջոցառումից, ինչն այդպիսի դեպքերում պարտադիր էր եւ օգտագործվել էր նախորդ մարզպետների պաշտոնակալության ժամանակ (բացի Ռոման Նավասարդյանի պաշտոնակալությունից, ով ընդհանրապես կողմնակից չէր փաշտուք արարողությունների): Կառավարությունն էլ, կարծեք, չէր կարելիք նորանշանակի պաշտոնակալումը, ինչի համար էլ Սյունիք էր գործուղել երկրորդական նշանակության մի չինովնիկ: Ժամանակին Սուրեն Աբրահամյանին ներկայացրելու էր եկել գյուղնախարար Աշոտ Ոսկանյանը, Ռոման Նավասարդյանին՝ տարածքային կառավարման նախարար Դավիթ Զաղոյանը, Էդիկ Բարսեղյանին՝ տարածքային կառավարման նախարար Լեոնիդ Հակոբյանը, Սուրեն Խաչատրյանին՝ ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը:

■ Մտտ մեկ ամիս տեւեց նոր մարզպետի փնտրտուքը: Թվում էր, թե բարձր իշխանությունն իրոք որոնումների մեջ է, ծանրութեւ է ամուսն եղած թեկնածուներին: Ըստ էության, սակայն, այդ ձգձգումն ինքնապատակ չէր եւ ոչ էլ փնտրտուք է եղել առհասարակ: Այդ մեկ ամսում շրջանառության մեջ դրվեց մարզպետի հնարավոր թեկնածուների (հավակնորդների) մտտ քսան անուն: Շրջանառվող անունների մի մասն ուղղակի վկայում էր, որ պրոցեսը զավեշտի է վերածվում, մանավանդ որ հավակնորդներից մի քանիսն իրենց ծաղրածուի պես պահեցին: Այդ անունը, մինչդեռ, խնամքով մշակված սցենարի տպավորություն էր թողնում, մանավանդ որ մայրաքաղաքային առաջատար լրատվամիջոցներն այդ թեմայի շուրջ բուռն քննարկումներ էին ծավալում՝ շրջանցելով գլխավոր հավակնորդի անունը: Պարզագույն այդ տեխնոլոգիան առավել պարզագույն մի հարց պիտի լուծեր՝ բոլոր այդ անունների համապատկերի վրա հետո պիտի բացակայեցին՝ թեք սրանք են թեկնածուները, ապա ամենահարմար Վահե Հակոբյանն է: Եվ բացակայեցին: Նույնիսկ երեկվա հավակնա

Շարունակությունը՝ էջ 3

Երկու պատահար մեկ օրում

ԱՍՈՒԽ

Հուլիսի 23-ին «Դանդի Փրիշս Մեթալս Կապան» ՓԲ ընկերությունում երկու պատահար է գրանցվել: Ապարբարձիչի շերտի վնասել է 27-ամյա Սամվել Զաքարյանի ուղեքր: Ուղեքրից մեկը շար լուրջ է վնասվել, անհետաձգելի վիրահատության կարիք է զգացվել: Սյունի պատահարը՝ շար ավելի նվազ հետևանքներով, տեղի է ունեցել ձեռնարկության հյուսիսային հատվածում ժամը 21.30-ի սահմանում: Խողովակի պարոլվելու պարզառով ջրի փաթեց հոսանքից ձեռքի եւ դեմքի շրջանում այրվածքներ է ստացել 22-ամյա Նվեր Ներսիսյանը: Բարեբախտաբար, երիտասարդի աչքը չի վնասվել:



Մայնի ցանե մի ոտքն անդամատելու անհրաժեշտություն կա) կարիք է եղել ստանալ տուժածի հոր (մայրը մահացած է) համաձայնությունը: Լրագրողները, բնականաբար, հետաքրքրվեցին Սամվել Զաքարյանի ծակատագրով: «Բժիշկներն ասացին, որ միայն վեց ամիս հետո պարզ կլինի, թե ինչ տեսակի պրոթեզ պիտի կրի, ավելորդ է ասել, որ «Դանդին» պիտի հոգա նրա առողջության հետ կապված բոլոր ծախսերը, – ասաց Հրաչ Զաքարյանը, – այս ցավալի պատահարը երիտասարդի ճակատագրի վրա լուրջ անդրադարձ չափի ունենա: Պի-

տի ամեն ինչ անենք, որ նա նորմալ քայլի, ձեռնարկությունում հարմար աշխատանք ունենա, եթե անհրաժեշտ է՝ գրասենյակային, մի խոսքով՝ ամեն ինչով օգտակար կլինենք նրա ընտանիքին»: Պատահարը տեղի ունենալուց հետո ընկերության գլխավոր տնօրենի ցուցումով, բացի վարչական շենքում, դադարեցվել են աշխատանքները, բոլոր ղեկավարները հավաքվել են պատահարի վայրում, փորձել հասկանալ եւ վերլուծել տեղի ունեցածի պատճառները, նաեւ քննարկվել են անվտանգության տեխնիկային առնչվող խնդիրներ: Ինչպես հայտնեց բանա-

խոսը, վերջին երկու ամսում «Դանդի Փրիշս Մեթալս Կապան» ՓԲ ընկերությունում հինգ պատահար է գրանցվել: Ընկերության տնօրենի փոխանցմամբ՝ աշխատանքի անվտանգության հանդեպ վերաբերմունքը պիտի փոխվի: «Նվերի հետ պատահածի մասին տեղեկանալուց հետո առաջին բանը, որ հայտնի է, այն էր, թե արդյոք չի վնասել տեսողությունը, պաշտպանիչ ակնոց կրել էր, թե ոչ: Բարեբախտաբար, այդ պահին ակնոցն աչքերին էր, այլպես ավելի տխուր փաստի առջեւ կկանգնեինք: Նվերին պատվիրել են հիվանդանոցից դուրս գրվելուց հետո ընկերության տարբեր տեղամասերում եւ արտադրամասերում անվտանգության դասեր անցկացնի, պատմի իր հետ կատարվածի մասին, մասնավորապես խոսի պաշտպանիչ ակնոցներ կրելու անհրաժեշտության մասին, քանզի ոչ բոլորն են պահպանում աշխատանքի անվտանգության այդ տարրական նորմը», - իր մտահոգությունը ներկայացրեց Հրաչ Զաքարյանը: Ի դեպ, ընկերությունում մեկօրյա դադարից հետո աշխատանքները վերսկսելուց առաջ գլխավոր տնօրենը տարբեր արտադրամասերի եւ տեղամասերի լեռնագործների եւ աշխատակիցների համար կես ժամանոց դասախոսություն է անցկացրել, ավելի փոքր խմբերի համար անվտանգության վերաբերյալ գրույցներ են անցկացրել տարբեր կարգի արտադրության կազմակերպիչները:

լուրեր

Ինչպես արդեն հաղորդել ենք՝ 2013թ. սեպտեմբերի 29-ին Սյունիքի մարզի թիվ 38 ընտրատարածքում տեղի կունենա ԱԺ մեծամասնական ընտրակարգով լրացուցիչ ընտրություն, որի նախապատրաստման ու անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի համաձայն օգոստոսի 5-15-ը պատգամավորի թեկնածուների գրանցման փաստաթղթերը կներկայացվեն համապատասխան ըԸՀ: Ի դեպ, ՀՀ մարզային կառույցում լուրջ տարածայնություններ կան պատգամավորի թեկնածուի շուրջ: Իշխող կամն ամեն ինչ անում է, որ թեկնածուն լինի Կապանից՝ կապացիներին սիրաշահելու համար, բայց եւ կամենում է, որ թեկնածուն լինի իր ամենահնազանդ ու ամենամանր սպասավորների շարքից:

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը հրապարակել է համայնքների խոշորացման եւ միջհամայնքային համագործակցության հայեցակարգը Սյունիքի մարզի օրինակով: ՀՀ կառավարության 2013թ. գործունեության միջոցառումների ծրագրի համաձայն՝ առաջիկայում կառավարությունը կքննարկի «Համայնքների խոշորացման մասին» պիլոտային ծրագրի նախագծային փաթեթը, ըստ որի Սյունիքի մարզում կնկատվեն վարչատարածքային բարեփոխումները: Հայեցակարգը ներկայացնում է առաջարկություններ մարզի վարչատարածքային դրության բարեփոխման եւ իրագործման վերաբերյալ: Հիշեցնենք, որ դրա հիմքում ընկած է «Համայնքների խոշորացման եւ միջհամայնքային միավորումների ձեւավորման հայեցակարգը», որ հաստատել է կառավարությունը 2011թ. նոյեմբերի 10-ին:

Ինչպես տեղեկացնում է «Սյունիք-Ձանգեզուր» բարեգործական հիմնադրամի գործադիր տնօրեն Լյուսյա Մեծույանը, հիմնադրամը (խորհրդի նախագահ՝ Սուրեն Խաչատրյան) Գրիխ քաղաքում լայն թափով իրագործում է մի քանի ծրագիր: Նախ՝ հիմնադրամը է հիմնադրամի կենտրոնական գրասենյակը, որը վերջին տարի տարում Սյունիքի մարզպետի օրհանյան նատակային էր: Նորովի է կառուցապատվում Սբ Գրիգոր Տաթևացու անունը կրող հրապարակը: Քաղաքի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու թիթեյա ծածկը փոխարինվում է քարե ծածկույթով: Մեծ հայրենականում զոհված գործադիրների հիշատակը հավերժացնող հուշարձանի համալիրում կառուցվում է ջրավազան եւ մի նոր կոթող, որով կհավերժացվի Արցախյան հերոսամարտում զոհված գործադիրների հիշատակը:

Հուլիսի 24-ին Կապանի քաղաքապետարանում ներկայացվեց Ռոզա Քարամյանի «Ռազմիկ, ասպետ եւ պարզապես մարդ» վերնագրով նոր գիրքը՝ նվիրված գեներալ-լեյտենանտ Մուրադ Սարգսյանին: Տպագրանակը 1000 է, որից 100 օրինակ հեղինակը որոշել է վաճառել բարեգործություն կատարելու նպատակով:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ
«Այունյաց երկիր» թերթի խմբագրակազմն օգոստոսի 1-ից մեկնում է արձակուրդ: Ընթերցողի հետ հաջորդ հանդիպումը կլինի սեպտեմբերի առաջին շաբաթուն:

«ԱՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ»

Կապանցի Լեւոն Աղայանը՝ Եվրոպայի չեմպիոն

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆԸ

Հուլիսի 25-ին մարզկենտրոնը ցնծությամբ դիմավորեց նրան: Կապան համայնքի ղեկավարին կից երիտասարդական խորհրդի նախաձեռնությամբ տեղի ունեցավ Լ.Աղայանի մեծարժան արարողություն: Մի խումբ համաքաղաքացիներ քաղաքի մուտքի մոտ մեծ խանդավառությամբ դիմավորեցին կապանցի չեմպիոնին եւ նրա առաջին մարզիչ Արսեն Պետրոսյանին: Քաղաքապետարանի հարակից այգում փողային նվագախմբի եւ երեխաների շնորհավորանքների ուղեկցությամբ նրանց դիմավորեցին Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը եւ այլ պաշտոնյա անձինք: Քաղաքապետը շնորհավորեց Լեւոնին, նրա մարզչին, հարազատներին եւ բարեկամներին՝ համոզված լինելով, որ կլինեն նորանոր եւ ավելի բարձր նվաճումներ: Քաղաքապետարանի եւ մարզպետարանի կողմից փոխանցվելով դրամական պարգևներ եւ խրախուսական նվերներ՝ քաղաքապետը շնորհավորեց նաեւ մարզպետի՝ Վահե Հակոբյանի անունից, ով բացակայում էր մարզկենտրոնից: Շնորհավորանքներին միացան նաեւ փոխմարզպետ Վաչե Գրիգորյանը եւ «Դանդի Փրիշս Մեթալս Կապան» ընկերության տնօրեն Հրաչ Զաքարյանը, ով 500 հազար դրամ պարգևավճար հանձնեց Լեւոնին եւ 200 հազար դրամ՝ մարզչին: Իրենց խոսքում մարզիչ Արսեն Պետրոսյանը եւ Լեւոն Աղայանը շնորհակալություն հայտնեցին ջրմը ընդունելության համար՝ նշելով, որ հաղթանակն իրենց պարտավորեցնում է, եւ երիտասարդ մարզիկներին խորհուրդ տվեցին ջանասիրաբար պարապել իրենց նպատակներին հասնելու համար:

...Մեղա, մեղա Խուստուկին



ՏԵՍԱԿԵՏ
Աժ պարզամալոր Վահե Հակոբյանի՝ Սյունիքի մարզպետ նշանակվելուց հետո N38 ընկերության գրասենյակում շուրջով Աժ պարզամալորի լրացուցիչ ընկերություն կլինի: Թեկնածուները դեռ չեն առաջարկվել, հետեւաբար այսօր հնչեցրած կարծիքներն ու դիտարկումներն առավել անաչառ կլինեն:

Ժազուն են հարցեր, որոնք հազվադեպ են բարձրաձայնվում, առավել հազվադեպ՝ պատասխան գտնում: Ի՞նչ է տալիս ժողովրդին մեծամասնական ընտրակարգը: Արժե՞ որեն է հույս կապել պատգամավորի հետ: Կապ ունի՞ արդյոք պատգամավորն ընտրողներին հետ: Որքա՞նով են կայացել ընտրությունների արդյունքում ձեւավորված մարմինները, կառույցները, խորհուրդները (սկսած դպրոցների աշակերտական խորհուրդներից մինչեւ...): Ի՞նչ պետք է փոխվի ընտրությունների մշակույթում: Ի՞նչ է ենթադրում թեկնածուի կուսակցական պատկանելությունը. փաստորեն ընտրվելու դեպքում Ազգային ժողովում նա պատկանելու է այս կամ այն խմբակցությանը, եւ եթե չհամապատասխանեն խմբակցության եւ իր ընտրողների շահերը, ո՞ւմ շահերի արտահայտողը կդառնա պատգամավորը, եւ ի՞նչ հետեւանքներ կբխեն դրանից: Նախքան ընտրությունները թեկնածուն կախվածություն է ունենում նախ՝ ընտրողներից, ապա՝ կուսակցությունից, իսկ ընտրվելուց հետո՝ միայն կուսակցությունից: Նման դեպքում ինչպե՞ս է վարվում խորագետ, հեռատես պատգամավորը: Հարկ է հիշել, որ պատգամավորը պարտք ունի ընտրողների առաջ. նա պետք է պարբերաբար հանդիպի իր ընտրողներին, լսի նրանց ծայրը, տեղյակ լինի տարածաշրջանի խնդիրներին, փորձի հասցնել դրանք

Ընտրական գործընթացը (գոնե հասարակ քաղաքացիների համար) կարող է նաեւ անկանխատեսելի լինել, ինչը թույլ է տալիս ենթադրել հանրության մեջ վերջին շրջանում տեղի ունեցող որոշ զարգացումներ: Միաժամանակ, կարծիքներ կան, որ ժողովրդի մեջ չկա ոգեւորություն, չկա հավատ ընտրությունների հանդեպ. կեցությունը, սոցիալական խնդիրներն այնպես են տրորել, ընկճել մարդկանց, որ նրանք դարձել են անտարբեր եւ իշխանությունների, եւ ընդդիմության հանդեպ: Մի՞թե դա իրողություն է. եթե այո, ապա վտանգավոր, քայքայիչ եւ կործանարար իրողություն է հենց հասարակության համար: Մարդը՝ հասարակության բջիջը, ապրում է, երբ հավատում է, սպասում մի բանի, երբ սիրում է կամ ատում, իսկ երբ անտարբեր է եւ անհավատ, ապա ողջ է սոսկ ֆիզիկապես: Այնուհանդերձ, մարդկանց մեջ

համապատասխան մարմիններին: Ցանկալի է, որ պատգամավորը տարածաշրջանում ունենա գրասենյակ, որ կապող օղակ կլինի եւ կկորդինացնի աշխատանքներն ընտրատարածքում: Իսկ մեր ընտրատարածքը բազում խնդիրներ ունի: Պատգամավորության թեկնածուն պիտի դրանց մասին տեղյակ լինի, ունենա ցանկություն եւ կարողություն դրանք լուծելու կամ դրանց մասին բարձրաձայնելու: Մի խոսքով՝ դա ծառայություն է, առաքելություն, պարտավորություն, որը ստանձնողը պետք է ունենա անսահման եռանդ, կրթով, կամք, լինի գործի, պատվի եւ խղճի մարդ: Տարածաշրջանում ունի բնապահպանական խնդիր, որն այնպես գոյություն չունի որքան որքան, որքան որքան: Օղջ, ջուրը, հողը աղտոտված են, անտառները՝ նոսրացած, վայրի կենդանիները՝ գրեթե անհետացած, մարդկանց առողջությունը՝ վտանգված: Եթե Շահան Շահնուրը ազգի ուժացման եւ մայրենի լեզվի ու հավատքի մոռացության համար ասում է՝ մեղա, մեղա Արարատին, ապա Խուստուկ պատգամում այս վիճակի եւ հետեւանքների համար մնում է ասել՝ մեղա, մեղա Խուստուկին: Քաղաքը սնուցող երակը՝ գյուղը, մեռնում է (հատկապես լեռնային գյուղը), գյուղերի բնակչության մեծ մասը թռչակառու է երիտասարդ ընտանիքները քաղաք են տեղափոխվում, գյուղում աշխատատեղեր գրեթե չկան, գյուղացին բերքի մեծ մասը կորցնում է, դպրոցները դեռ գոյատևում են սակավաթիվ աշակերտներով, մանկապարտեզներ գրեթե չկան: Երիտասարդական քաղաքակրթության խնդիր կա: Բազում խոչընդոտներ կան երիտասարդների առջեւ՝ աշխատատեղ, կայացման խնդիր, ընտանիք կազմելու, բնակարանի, ընտանիքի գոյությունը պահպանելու... Երբ պետք է հետեւանք՝ արտագաղթ, այսինքն՝ կարոտ, նահանջ, ուժացում: Մեղա, մեղա Խուստուկին: **ՆԻՆԵՆ ՍԱՐԳՅԱՆ**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Սյունիքում՝ Նոր ստրատեգիա

Սկզբը՝ էջ 1

Նորոգելը՝ զավգակացած (ու այդ նպատակով խաղի մեջ ներդրված), պրոնազիս՝ այս պահի համար ամենահարմար թեկնածուն Վահե Հակոբյանն է...

■ Նոր մարզպետի նշանակումը անմիջապես հետո համրության ամենատարբեր խավերի ներկայացուցիչներ ասպարեզ նետեցին հարցադրումների մի ամբողջ շարք: Հարցադրումներից մեկն այսպիսի բովանդակություն ուներ՝ որքանով էր ճիշտ Վահեի նշանակումը, արդյո՞ք նա այն արժանավորն է, ով պիտի զբաղեցներ մարզպետի աթոռը: Իրականում, սակայն, այդ հարցադրումը սխալ է եւ ոչ տրամաբանական: Հայաստանում, հատկապես կարգերի ընտրության եւ տեղաբաշխման գործում, ինչ-որ հաստատուն սկզբունքներ, չափանիշներ, դասական կանոններ ու մոտեցումներ չկան: Այդ մասշտաբի կարգերը նշանակվում են ամծամբ նախագահի կողմից, որի թեկնածության օգտին էլ, որպես կանոն, միածայն (առանց մտածելու եւ աչք թարթելու) քվեարկում են իշխող կուսակցության ղեկավար մարմնի անդամները: Այլ հարց է, թե ինչ սկզբունքով է նախագահն առաջնորդվել Սյունիքի հերթական մարզպետ նշանակելիս (որան կանգորդառնանք քիչ հետո): Այնպես որ Վահե Հակոբյանի արժանավորության հարցի քննարկումը (կասկածի տակ ղեկը) տեղին չէ, քանի որ նա անուն առ անուն չենք քննարկել մյուս մարզպետների, նախարարների, փոխնախարարների, քաղաքապետների, գյուղապետների, պետական կառույցների ու գերատեսչությունների ղեկավարների արժանավորության հարցը: Եվ ուրեմն՝ այսօր եւ ընդմիջտ հրաժարվենք Վահե Հակոբյանի արժանավորության (համապատասխանության) հարցը քննարկելուց, մանավանդ որ ժիծաղելի ու ողորմելի են դառնում բոլոր նրանք, ովքեր ուզում են (փորձում են) այդ հարցին պատասխանելու պատրանք ստեղծել: Ընդ որում Վահե Հակոբյանին զնահատելու (արժեւորելու) գլուխկոծիների շքեթն ունենում է նույն դրսեւորումները, ինչ տեսել ենք նախորդ բոլոր մարզպետների նշանակման ժամանակ (նույն գնահատականները կհնչեին, անշուշտ, եթե մարզպետ նշանակվեր միանգամայն այլ անձնավորություն): Խնդիրն այն է, որ հայր եւ որդի Հակոբյանները կարող են հանկարծ լուրջ ընդունել այդ փառաբանություններն ու նոր գլխավորություն մեջ ընկնել (եթե արդեն չեն ընկել):

■ Նույն տրամաբանությամբ անհարկ է նաեւ հարցադրումը, թե կկարողանա՞ Վահե Հակոբյանը կատարել մարզպետի պարտականություններն ու պատշաճ հեղինակություն ու ճանաչում ձեռք բերել, մանավանդ որ նրան նախորդել է գործարար հատկանիշներով իրոք անզբաղանջ Սուրեն Խաչատրյանը: Ներկա մթնոլորտում այդ հարցադրումն էլ, իսկապես, անհեղինակ է: Հայաստանում կան քեզ հանդուրժում եւ տվյալ պաշտոնում, կան չեն հանդուրժում: Այնպես որ Վահեի աշխատելու է եւ աշխատելու է այնպես, ինչպես աշխատում են հանրապետության վարչապետը, նախարարները, փոխնախարարները, մարզպետները, քաղաքապետները, գյուղապետները: Հայաստա-



նում կարելի է եւ չաշխատելով լավ աշխատողի համբավ ձեռք բերել: Այլ հարց է, թե մարզում ինչ է անելու նորանշանակ մարզպետը: Ասենք ամօրյապես. հիմնարար գործեր, բնականաբար, չեն կատարվի, համակարգը թույլ չի տա, եթե նույնիսկ նա փորձի նման գործեր ձեռնարկել: Մարզպետն իր պաշտոնական պարտականությունները (ծեսկերպված ՅՅ նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրով) չի կարող լիարժեք կատարել, թեկուզ եւ այն պատճառով, որ մարզպետարանի ենթակայության ներքո գտնվող ամենակարեւոր ոլորտները՝ հանրակրթությունն ու առողջապահությունը, համընդհանուր ճգնաժամի մեջ են ու բարձիթողի վիճակում:

Մարզային խնդիրների շուրջ էլ մարզի բնակչության հասարակական, քաղաքական ուժերի կոնսոլիդացիա (բնականաբար) չի լինի: Նման կոնսոլիդացիայի համար հայր եւ որդի Հակոբյանների հարկ կլինի ասպարեզել անապացուցելի մարզպետի աթոռն իրենք վերցրել են ոչ թե սեփական ունեցվածքը պահպանելու, ոչ թե ունեցած միջոցներով փառքի պատվանդան բարձրանալու, այլ Սյունիքի առջեւ ծառայած հիմնախնդիրներից գոնե մեկը լուծելու համար:

Միաժամանակ կառավարության պահուստային ֆոնդից ժամանակ առ ժամանակ կատարվող հատկացումներով, ինչպես եւ Քաջարանի կոմբինատի ներդրումներով ընթացիկ մանր-մունր հարցեր կլուծվեն... Եվ գրեթե ամեն օր կլսենք երախտագիտության խոսքեր հոր եւ որդու բարեգործությունների ու իմաստուն քաղաքականության մասին:

■ Մեկ ուրիշ հարց, մինչդեռ, չի կարելի անտեսել. ի՞նչ սկզբունքով է առաջնորդվել նախագահը Սյունիքի օրվա մարզպետ նշանակելիս: Ըստ էության նույն սկզբունքով, ինչ սկզբունքով 2004-ին, 2007-ին եւ 2012-ին Վահե Հակոբյանը նշանակվեց Աժ պատգամավոր: Վահեի Քաջարանի կոմբինատի տնօրենի որդին է, դրանով ամեն ինչ ասված է: Եվ նախագահը, նոր մարզպետ նշանակելով, հերթական ինդուլգենցիան է

տվել հանրապետության ամենաշահութաբեր ընկերության սեփականատերերից մեկին, ով նաեւ ընկերության տնօրենն է: Չի բացառվում նույնիսկ, որ այս պահին ոչ թե հայր եւ որդի Հակոբյաններն են ցանկացել վերցնել մարզպետի աթոռը, այլ նախագահն է կամեցել այդ աթոռը տալ նրանց՝ ոչ պետական սեփականություն հանդիսացող պղնձամուղիք-դեմային հսկային ավելի մոտ կանգնելու, սեփականատերերի հետ նոր թեկնածու կապվելու համար:

Սույն նշանակումն ունի մեկ այլ շարժառիթ եւս՝ Սյունիքը հանքահումքային բազա դարձնելու պետական քաղաքականությունը նոր եւ ակտիվ փուլ է թեւակոխում: Եվ Սյունիքի մետաղական ռեսուրսներն արդյունահանելու գործում Սյունիքի մարզպետարանը պետք է լինի հավելյալ (օժանդակ) գործիք այն քչերի ձեռքում, ովքեր արդեն իսկ տիրապետում են մարզի ընդերքի այդ հատվածին: Եվ Սյունիքի մարզպետը պետք է լինի մի անձնավորություն, ով, նախենառաջ, այդ քաղաքականության զավակն է եւ Սյունիքն ասպատակելու հաշվին (ի թիվս մի քանի հոգու) անձնական շահույթ է ստանում ու շահագրգռված է այդ քաղաքականության շարունակականության մեջ:

Այդ ամենի արդյունքում (դրանով) մարզում հռչակվեց կառավարման նոր մոդելի (հանրապետությունում նախօրինակը չունեցող)՝ օլիգարխի (օլիգարխիական) կառավարման ներդրման սկիզբը: Կառավարման այդ ձեւի առանձնահատկությունները պարզաբանելու մտադրություն չունենք, քանզի հարցն ավելի մատչելի է հաջող պարզաբանվել է բազմաթիվ հանրագիտարաններում ու մասնագիտական գրքերում: Կառավարման այդ ձեւի էությունն ավելի ընկալելի դարձնելու համար պարզապես հիշենք հանրագիտարանային մի ձեւակերպում. «Օլիգարխիա - քչերի իշխանություն, կառավարման ձեւ, որի դեպքում պետական իշխանությունը տնօրինում է մարդկանց փոքր, որպես կանոն, տնտեսապես առավել հզոր խումբ: Տերմինն առաջին անգամ օգտագործել են Արիս-

տոտելը, Պլուխիոսը եւ հին աշխարհի այլ իմաստուններ: Կառավարման այդ ձեւը համարվել է պետական համակարգի այլաբերման արդյունք: Օլիգարխիան կառուցվում է առավելապես ընտանեկան-դինաստիական հիմքի վրա: Օլիգարխիական կառավարման նպատակն է սեփական ունեցվածքի անձեռնմխելիության ապահովումը եւ նոր կապիտալի կուտակումը, քանի որ նախարար է, քանի որ նա իրենց ունեցվածքը չեն խլել, ինչպես իրենք են խլել ուրիշների ունեցվածքը»:

Սյունիքի կառավարման այդ ամենի հետ մեկտեղ կունենա առանձնահատկություն: Սովորաբար «Բարձր դուռը» մարզերում պահում եւ քաջալերում է միմյանց հետ հակամարտող, միմյանց հակակշռող առնվազն երկու կլան տարածքն ավելի կառավարելի պահելու համար (իրեն վերապահելով գերագույն արբիտրի դեր): Սյունիքի մարզի օրինակը՝ ահավասիկ: Դա Յոնի ժամանակներից կիրարկվող ձեւ է՝ «Բաժանիր, որ տիրես», որը նաեւ պարսից արքաները ժամանակին կիրառում էին Հայաստանում՝ ստեղծելով համապատասխան ավանդույթներ: Սյունիքում էլ անկախության շրջանում կիրառվեց այդ մեթոդը: Դրա տիպիկ օրինակը Սուրեն Խաչատրյանն է: Մաքսիմ Հակոբյանի միջեւ ժամանակ առ ժամանակ երեւանից հրահրվող կռիվներն էին ու դրանց հաջորդող սիրախաղերը: Սյունիքում Մաքսիմ Հակոբյանի միաբեւեռ եւ միահեծան իշխանության ստեղծմամբ, սակայն, «Բարձր դուռը» չի հրաժարվի «Բաժանիր, որ տիրես» գործելակերպից (քանզի կառավարման այլ սկզբունք առայժմ հարգի չէ մեզանում): Դրա համար ռեզերվում կպահվի (կքաջալերվի) մեկ կան երկու սյունիքյան կլան (թայֆա), որը երեւանից հրահանգ ստանալու դեպքում կապտամբի Մաքսիմյան իմպերիայի դեմ: Չի բացառվում նաեւ, որ, մարզպետական կառույցը Սյունիքում Մաքսիմ Հակոբյանի ընտանիքի Ոստերի տակ մատաղ անելով, «Բարձր դուռը» գնա հանքարդյունաբերության մեջ այդ կլանի ունեցած բաժնեմասերի նվազեցման հայկական ավանդա-

կան ճանապարհով իբրեւ փոխառուցում:

■ Քաղաքական առումով Վահե Հակոբյանի վիճակը, վերը շարադրվածով հանդերձ, շատ հակասական է եւ կշարունակի այդպես մնալ: Գիշտ է, նա ունի երկրի նախագահի անթաքույց հովանավորությունը, նա ֆինանսական հսկայական միջոցներ տիրապետող կլանի ներկայացուցիչ է, բայց... Բաժանարար գծերն են Սյունիքում շատացել տարիների ընթացքում, եւ դրանք ներկայումս հնարավոր չէ վերացնել դյուրությամբ:

Նախ՝ Սյունիքի իրական շահերի (շարքային սյունեցիների շահերի) եւ իշխող վարչախմբի շահերի միջեւ կա անհարթահարելի ջրբաժան: Իշխող վարչախումբը, հակառակ սյունեցիների կամքի, պետական քաղաքականության մակարդակով քաջալերում է Սյունիքի ընդերքի հոշոտումը՝ անուղղելի, անվերականգնելի վնաս հասցնելով շրջակա միջավայրին, մարդկանց կյանքին եւ առողջությանը: Այս հակադրության մեջ նոր մարզպետը չի կարող չպաշտպանել վարչախմբի շահերը: Դա էլ ամենամեծ բաժանարար գիծն է նոր մարզպետի եւ Սյունիքի բնակչության հիմնական մասի միջեւ:

Երկրորդ: Նոր մարզպետն առաջին հայացքից լեռնահանքային արդյունաբերության աշխատողների (հանքագործների) ներկայացուցիչն է նախենառաջ: Իրականում, սակայն, Վահե Հակոբյանն ամենամեծ հակասությունն ունի հանքագործների հետ: Միայն Քաջարանում մոտ երկու հազար հանքագործ Մաքսիմ Հակոբյանին մեղադրում է այն բանում, որ կոմբինատի մասնավորեցման ժամանակ իրենց զրկել է հասանելիք 20% փայաբաժնից, իսկ նոր մարզպետը չի կարող մտնել այդ խնդրի մեջ: Հետեւաբար, հազարավոր քաջարանցիներ (նաեւ նրանց ժառանգորդները) համարում են համարելու են, որ Վահեի միլիարդատեր է դարձել բացառապես իրենց անձնական միջոցներով:

Երրորդ: Բուն մարզկենտրոնում էլ իրերի դրությունը սովորական չէ: Քանի տարի է, ինչ Կապանի անշարժ գույքի շուկայում եւ մանր ու միջին ձեռնարկատիրության ոլորտում գլխավորապես վիստում են (քիչ բացառությամբ) քաջարանյան կլանի յասաուլները: Այնպես որ այդ կլանի եւ մարզկենտրոնի բնակիչների միջեւ ստեղծվել է մի բաժանարար, որն այնպես ոչ ոք (անգամ Սերժ Սարգսյանը) չի կարող վերացնել: Այս դեպքում էլ Վահեի հայտնվել է բարիկաղի այն կողմում:

Չորրորդ: Մոտ ինը տարի պատգամավորի մանդատը կրող անձնավորությանն ընտրողները տեսնում էին միայն ու միայն Ամանոնի տուպակներ բաժանելիս (երեւի դա նկատ էր ունեւր վարչապետը, որ Վահե Հակոբյանին մարզպետ նշանակելիս հայտարարեց. «Նրա հրապարակային գործունեությանը ծանոթ ենք»): Մինչդեռ նա աշխատավարձ էր ստանում հարկատուների միջոցներով եւ գոնե մեկ անգամ հարկ չհամարեց ընտրողներին ասել, թե ինչով է զբաղված օրենսդիր մարմնում: Այդ հանգամանքը, ուզենք-չուզենք, հավասար դեֆիցիտ է ստեղծում նրա կերպարի հանդեպ: Առավել անհուսալի եւ խորթ է դառնում նրանշանակի կերպարն արքատության ճիրաններում հայտնված եւ գործազուրկ դարձած տասնյակ հազարավորների համար, քանի որ այլեւս զաղտմիք չէ նրա՝ պատգամավորական տարիներին ու հանդերձանուր ճգնաժամի օրերին միլիարդատեր դառնալու առեղծվածային իրողությունը: Նոր մարզպետը լուրջ գործարարականությունը էջ 4

ԳՐԱԿԱՆ ԱՅՈՒՆԻՔ

Սյունիքի գեղարվեստական ընդերքի նոր ծիլերը



ԱՐԱՎՐԻ ՇԱՏՈՒՐՅԱՆ

Հայաստանի գրողների միության անդամ, ՀԳՄ Սյունիքի մասնաճյուղի նախագահ

Վերջերս Հայաստանի գրողների միության և ՀԳՄ Սյունիքի մասնաճյուղի նախաձեռնությամբ հրատարակվել է «Երախայրիքներ» ընդհանուր վերնագիրը կրող գրքույկ-ժողովածու, որն ունի «Ստեղծագործում է Սյունիքի երի-

տասարդությունը» վերտառությամբ ենթավերնագիրը: Գրքի ստեղծման շարժառիթները մի քանիսն են եղել: Նախ՝ նպատակ է դրվել ցույց տալ, որ Սյունիքի գեղարվեստական ընդերքից այսօր էլ դուրս են գալիս նոր ու անհայտ անուններ, ովքեր այս կամ այն չափով կարող են համալրել ավագների շարքերը: Բոլոր ժամանակներում էլ ավագներին հետաքրքրել է այն հարցը, թե ովքեր են գալիս իրենց փոխարինելու, ստեղծագործող ինչ սերունդ է աճում եւ, որ շատ կարևոր է, ինչ մտահոգություններ ունեն այսօրվա պատանին ու աղջնակը: Տվյալ դեպքում մեր խնդիրն է եղել ընթերցողի սեղանին դնել աճող սերունդի խոհերը, զգացումները, հոգեբանական դրսևորումները, մոտեցումներն ու ստեղծագործական կարողություններն արտացոլող մի գրքույկ եւ, առանց առանձնաշնորհ տաղանդերի փնտրելու, ցույց տալ, թե ինչի են ընդունակ ստեղծագործական իրենց առաջին քայլերն աճող պատանիներն ու աղջիկները: Այսպիսի խնդիր դնելով մեր առջեւ,

ժողովածուն կազմելիս արժեւորել ենք ոչ այնքան գեղարվեստական արհեստավարժությունը, որքան ստեղծագործող երիտասարդությանը (պատանիներին) ներկայացնելու եւ ինչ-որ տեղ նրանց խրախուսելու խնդիրը: Բոլոր դեպքերում հաշվի ենք առել այն համագամանքը, որ գործ ունենք սկսանակների հետ, որոնցից շատերն առաջին անգամ էին արժանանում տպագրի խոսքի: Բայց սա ամենեւին էլ չի նշանակում, որ այս ստեղծագործողների մեջ շնորհալիներ չկան: Կան: Եվ մեր խնդիրներից մեկն էլ այն է եղել, որ հասարակության ընդերքից պեղենք-հանենք շնորհալիներին ցույց տալով, որ ստեղծագործական աշխարհ են եկել այնպիսի նորովի եւ ունակ ուժեր (ուսանողներ, աշակերտներ), որոնցից ոմանք կարող են իրենց ուսերին առնել վարկա արժանավորների անվան ծանրությունը: Բայց նպատակը մի բան է, այն իրագործելը մի այլ բան: Նախեւառաջ պետք է մեր ձեռքի տակ ունենայինք ստեղծագործողների եւ նրանց ստեղծագործությունների ո-

րոշակի քանակ ու նոր մտածեինք ժողովածու կազմելու մասին: Իհարկե, հեշտ չէր ամբողջ մարզի մասշտաբով որոնել ու գտնել դեռեւս անհայտ անուններ, ովքեր վեհերոտ կասկածամտությամբ չէին ուզում դուրս գալ գրական ասպարեզ: Շատերն էին հեռու ժողովածու մտնելու հավակնությունից: Մասնաճյուղի ստեղծագործական խորհուրդը հայտարարեց մինչեւ 25 տարեկան ստեղծագործողների մրցանակաբաշխություն: Տեղի ունեցավ մեզ համար անսպասելի մի աշխուժություն: Մարզի տարբեր ծայրերից հայտ ներկայացրեց երեսուցից ավելի ստեղծագործող, որոնց մի մասը բարձր դասարանների աշակերտ էր, մյուս մասը՝ բուհի ուսանող: Մասնաճյուղի ստեղծագործական խորհուրդը մասնակցներից առանձնացրեց համեմատաբար յոթ լավագույնին, ովքեր էլ արժանացան պատվոգրերի ու շնորհակալագրերի: Ժողովածուում ընդգրկել ենք մինչեւ 25 տարեկան 15 ստեղծագործողի անուն խուսափելով նրանցից որեւէ մեկին բանաստեղծ կամ արձակագիր կոչելուց: Նրանցից յուրաքանչյուրը դեռեւս ուղղակի ստեղծագործող է, եւ հայտնի չէ, թե ով մինչեւ վերջ կքայլի գեղարվեստական ինքնայրումի մկիրական ճանապարհով:

Ժողովածուում ընդգրկված յուրաքանչյուր հեղինակից ստորեւ ներկայացնում ենք մեկական ստեղծագործություն:

«Երախայրիքներ» ժողովածուում ընդգրկված յուրաքանչյուր հեղինակից ստորեւ ներկայացնում ենք մեկական ստեղծագործություն:



ԱՐԱՎՐԻ ՆԱԿԱՍԱՐԳՅԱՆ

Սովորում է Գորիսի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում

*Մեր անցյալի խենթ հորձանքում
Մենք փնտրում ենք անհետ կորած՝
Մեր մեծ սիրտ միջի, այո...
Ու հեթիաթի սրվերներում
Ճնվելը սեր ենք մենք որոնում...
Մենք փնտրում ենք ճախրանքը մեր՝
Երազների թելը բռնած:
Ու գնում ենք, ու քանում ենք
Մեզ հետ բազում երգ ու վերքեր:*



ԱՆԱՅԻՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ավարտել է Երեւանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետը

Սիրո հաղթանակը

մոտեցավ լուսամուտին, ինչ-որ ներքին հուզումից թափահարեց գլուխը եւ փորձեց ուշքի գալ իրեն տանջող մտքերից:
Լուսինը հանդարտ լողում էր երկնքում: Նա կանգնած էր մտամտելի, կարծես, ինչ-որ բան էր փորձում կարդալ երկնակամարի վրա: Այդպես երկար մնալուց հետո նա անհանգիստ նայեց հանդիպակաց փողոցին ու ինչ-որ բան մտաբերելով՝ դուրս եկավ տնից: Քայլում էր անեն ինչ մոռացած: Նայում էր շուրջը եւ որեւէ նոր բան չէր տեսնում:
Նույն ծառուղին էր, նույն երկնածրար բարդիները, նույն լայնափեշ ուռեհին: Նույնը էր նաեւ իր հուշերի մատարանը:
Նա լուռ նայեց շուրջը, մտեց մտաբանին, գլուխը հենեց նրա թիկնակին ու սկսեց լաց լինել:
Զգիտես ինչու ամբողջ մարմնով դողում էր: Կարծես ծուլվել էր մտաբանին, իսկ անձրեւը հետզհետեւ ուժգնանում էր: Սառը կաթիլները սողալով էին նրա ծոծրակից, իսկ նա ոչինչ չէր զգում: Հոգին տակնուվրա անող ցավը, կարծես, անզայայացրել էր: Միայն մի միտք էր անընդհատ պտտվում նրա գիտակցության մեջ՝ այն, ինչ որ եղել է, այլեւս հետ բերել հնարավոր չէ...
Աչքերը մի տեսակ շաղկել էին, թախծախառն մշուշ էր մտել ամենուր: Երբ նա գլուխը բարձրացրեց, ուսերին թափված սևասաք մազերը ետ տվեց նուրբ ու մոմագույն մատներով սրբեց աչքերը եւ անձրեւի միջից նայեց հեռու հորիզոնին: Նրա աչքերի առջեւ ուրվագծվեց հարազատ ու բազմալի մի պատկեր, որ իրենից անչափ հեռու էր...
Օրիորդն ընդոստ ցատկեց տեղից, տրորեց արցունքախելոց աչքերը, դիմացը դարձյալ անմյուսական, եթերային պատկերն էր...
Ա՛խ, կապույտ կարոտ անցած օրերի:
Ամեն, ամեն ինչ անցել էր սերը...
Այսօր անա նա հայտնի է որպես շնորհալի դաշնակահարուհի: Փարիզում էր եղել, հանդես էր եկել մեծ ու համբավավոր բեմերում: Նա հայտնի անուն էր արտերկրում: Նա

նվաճել էր բարձրաճաշակ ու խստապահանջ եվրոպացու սերը:
Երեկ էր: Քաղաքը ննջում էր խոր հանդարտության գրկում: Նա նվագում էր քաղաքի հյուրանոցներից մեկում, մոմերի շացնող լույսերի տակ: Բարակ իրանը ճոճվում էր մեղեդուն համաչափ: Այդ պահերին նա ինքնամոռացության մեջ ծուլվում էր երաժշտությանը, բարալիկ մատները սահում էին ստեղծողի վրա, եւ նա փակ աչքերով տեսնում էր միայն իր սիրեցյալի լուսանաճանջ պատկերը:
Շրջապատը լիքն էր նրա հոգեպարար երաժշտությամբ, նրա մատները պարում էին ստեղծողի վրա: Ընդհանուր ոգեղենության մեջ նա կորցրել էր իր գոյությունը: Փակ աչքերի ետեւում դարձյալ սիրեցյալի պատկերն էր: Ոչ մի կերպ այդ պատկերը նրանից չէր հեռանում: Նա փորձում էր իր հոգու հեռվից հեռու վանել նրան, բայց չէր հաջողվում: Նրա հոգում սերն ու ատելությունը խառնվում էին իրար...
Մի պահ չհասկացավ, թե ինչու հանկարծ մոլեգնեց, մատները թափով զարկեց ստեղծողին, փոթորկվեց, ճոճվեց աթոռի վրա: Եվ այդ պահերին նրան թվում էր, թե ինքն ոչ թե նվագում, այլ ինչ-որ բան է կերտում, արարում:
Մոմի լույսը թթռում էր դահլիճը պատած հովից եւ գնում ծուլվում ծանոթ մեղեդուն: Նրա հոգին թափառում էր ինչ-որ անհայտ հեռուներում, եւ նրան թվում էր, թե անցյալում ամեն ինչ հեթիաթ է եղել ու մի անիրական մղձավանց: Հոգում ծառու եղած վեհության այդ պահին էլ նա դադարեց նվագը, եւ մեղեդին անուշ դողանքով գնաց-խառնվեց հանդիսատեսների բուռն ծափահարություններին:
Սրտում էրաժշտության երանությունը դեռ չէր մարել, երբ նա իր հետեւում զգաց մեկի շունչը.
– Ո՛վ կա այստեղ:
Շուռ եկավ ու իր հետեւում տեսավ մի երիտասարդի, ով ժպտաղեն ու բարեհամբույր նրան մեկնեց ճերմակ մի ծրար եւ ստվերի պես հեռացավ:

Աղջիկը վեհերոտ կասկածամտությամբ վերցրեց ծրարը, դանդաղորեն բացեց, մոտեցրեց լույսին ու կարդաց հետեւյալը.
«Ժամանակներ են անցել: Բայց թվում է, թե ես երեկ եմ հեռացել քեզից: Սակայն ճակատագիրը նորից հանդիպեցրեց մեզ: Ես ողջ հոգով ըմբռնվեցի քո նվագը, եւ սիրտս նորից խլրտաց կրծքիս տակ: Ձգացի, որ դեռ սիրում եմ քեզ, եւ սա երբեք էլ պատահական չէ, որ ես տեսա քեզ էլ կեսից քո աստվածային նվագը: Ի՛նչ լավ էր, որ ես քեզ նորից տեսա: Տեսա քո արցունքները, զգացի քո սրտում կուտակված անհուն ցավը, բաժանումի մորմոքը... Ես քեզ շատ եմ սպասում: Արի հանդիպենք վաղը: Հանդիպենք այնտեղ, որտեղ դու թողել ես քո սիրտն ու սերը...
Քո՛ւ Ա՛մ ամա՛յ:»
Աղջիկը նոր զգաց, որ փակ վարձուկայի հետեւում արդեն անդորր է, դահլիճում այլեւս հանդիսատես չկա:
Հայտնի դաշնակահարուհին վեր կացավ, դանդաղ քայլեց դեպի հյուրանոցի իր համարը եւ ազատություն տվեց արցունքներին:
Երկար ժամանակ չէր կարողանում քնել: Անհանգստությունը պատել էր նրա ետքերը: Դեռ օրեր առաջ էր որոշում կայացրել՝ այլեւս չհանդիպել նրան: Բայց երբ հիշեց նամակի տողերը, միանգամից թուլացավ նրա վճռականությունը: Նամակի տողերի միջից մի տարօրինակ հարազատություն գալիս-փաթաթվում էր նրա ետքերը, ջերմացնում սիրտը: «Ուրեմն ամեն ինչ կորած չէ: Նա դեռ սիրում է ինձ», – բոցկտում էր միտքը, եւ այդ գիտակցությունից քիչ էր մնում խելագարվելը, – ի՛նչ կա որ, – մտածում էր նա, – երեւի այդպես էլ է լինում, մեկ էլ տեսար՝ չնչին մի բանից խռովեցին սիրող սրտերը, ափսոսանքով ու ցավով բաժանվեցին իրարից... բայց սիրո կարոտը մնաց ու ցավագին քրքրեց նրանց սիրտը... Երեւի հեռավորության վրա ավելի է ամրապնդվում փոխադարձ այն զգացումը, որ սեր է կոչվում...
Եվ սերը, եթե իսկական է, մկիրական, շիտակ ու անկեղծ, երբեք

չի մեռնում, այլ վերընծյուղվում է, անզայայրեն աճում ու դառնում մշտական...
Սա երբեք էլ վերտառ տրված բախտի ծախտույն չէ: Սա սիրո ասպետն ու զգացումի կրկնությունն է, անշուշտ, նոր ու հրավառ բոցկտումներով:
«Ես գալիս եմ, գալիս եմ մեր հանդիպման երանությանը արբած, ես չեմ կարող չգալ: Սենք մի հոգի ու մի մարմին ենք, սիրելիս, – մըմջում էին նրա շուրթերը, – ես հասկացա, հասկացա, որ փշրված չեմ իմ լուսեղեն երազները, ես հասկացա, որ աշխարհում մեկը կա, որի համար արժե ապրել: Գալիս եմ, սիրելիս»:
Եվ ամեն ինչ փոխվեց միանգամից, ամեն ինչ զարման գույն ստացավ, բուրբ դարձան սիրելի ու բարի:
Եվ սերը հաղթեց:
Զարուհուկությունը՝ էջ 6



ՔՐԻՍՏԻՆԵ ԳԻՆՈՎՅԱՆ

Սովորում է Գորիսի N4 ավագ դպրոցի հումանիտար հոսքի 11-րդ դասարանում

*Մորս այս հուզիչ խոսքերից հետո
Ես կարողացա էլ ոչինչ ասել,
Գլուխս երա ջերմ կրծքին հենած՝
Սրբի գարկերը սկսեցի լսել:
Խաղաղում է իմ հոգին անհանգիստ,
Եվ իմ մարմինը արդեն չի մրսում:
Ու հանգիստ եմ ես խաղաղ օրվա պես,
Իմ գիտակերտ երկինքն է լազուր,
Իսկ մի աղավթի իմ աչքի առաջ
Իր ձագուկի հետ պարում է նազուկ:*

ԳՐԱԿԱՆ ԱՅՈՒՆԻՔ

Սյունիքի գեղարվեստական ընդերքի նոր ծիլերը

Սկզբը՝ էջ 5
ՎԱՅՆ ԶԱԿՈՒՋԱՆՅԱՆ
Սովորում է Սիսիանի ավագ դպրոցի ֆիզմաթ հոսքի 10-րդ դասարանում



Վիսենտը

Հարված «Նոր կյանքի դուռը» գիրաֆանդատի վիպակից

Վիսենտը բացեց աչքերը: Նա մի շնչով քնել էր ամբողջ գիշերը: – Ես ի՞նչ երագ եր, – ասաց ու ծննդեց աչքերը:

Նա դուրս թռավ մահճակալից՝ էլի հագուստով էր քնել:

Խնամքով վրձված սառը ջրով, դանդաղ քայլերով գնաց խոհանոց ու բացեց սառնարանը: Մի կտոր եփած միս կար ու մի շիշ հյութ: Վիսենտը վերցրեց երկուսն էլ ու գնաց հյուրասենյակ: Հեռուստացույցի վահանակը դրված էր սեղանին: Վիսենտը փոշկեց բազմաթուփ, միացրեց հեռուստացույցն ու սկսեց կրծել մսի կտորը: Ֆիլմ էր ցուցադրվում «Ծամփորդություն ժամանակի մեջ»: Վիսենտի գլխում մի միտք ծագեց: Նա մի մեծ կուն արեց հյութից ու սկսեց բարձրաձայն խոսել: – Ծամփորդություն ժամանակի միջով: Ուղղակի հիանալի է: Տեր Աստված, իմ երագը: Մի՞թե նույնը չէ, ինչ ինձ հետ է պատահել: Ես տեղափոխվել էի 3000 թվական: Բայց ես Ստրոգա անունով գետ չգիտեմ, չեմ լսել: Գուցե կա:

Համկարծ հեռուստացույցը կայծ տվեց ու անջատվեց: Վիսենտը դուրս եկավ տեղից եւ բարկացած ցած դրեց ձեռքի շիշը: – Հերիք չի՞: Ամեն օր շարքից դուրս ես գալիս: Ընդամենը հինգ րոպե աշխատեցիր: Նա գրկեց ծանր հեռուստացույցն ու տեղափոխեց կողքի սենյակը, որեք փոքրիկ սեղանի վրա: Սենյակում աթոռ ու պահարան էլ կար, իսկ պատից բազմաթիվ գործիքներ էին կախված: Նրանցից մի քանիսի վրա փոքրիկ էկրաններ էին: Վիսենտը սստեց աթոռին ու բացեց պահարանը, այնտեղ էլ գործիքներ էին: Ապա հանեց հեռուստացույցի կափարիչն ու սկսեց բզբզել: Նա մի հոսանքալար կտրեց ու միացրեց մյուսին:

Վերցրեց վահանակը, որի վրա կոճակաման սեղմակ կար, կենտրոնում փոքրիկ էկրան, իսկ անկյունում ալեհավաք էր: Վիսենտը մի քանի կոճակ սեղմեց: Բացվեց սենյակի դուռն, ու մերս մտավ մի փոքրիկ, զվարճալի տեսքով ռոբոտ: Քառակուսի էր, փայլուն մետաղից, գլխին փոքրիկ տեսախցիկ: Ռոբոտին տեսնելով՝ նա ուրախացավ: – Փառք Աստծո, որ գոնե դու աշխատում ես: Դու միակ իրն ես իմ տան: Դու իմ ընկերն ես: Միակը:

Վիսենտը վահանակի վրա ուրիշ կոճակ սեղմեց, ռոբոտի տակ անիվները պտտվեցին, ու նա դուրս եկավ սենյակից: Տեսախցիկը պատկերը փոխանցում էր հեռակառավարման վահանակի էկրանին: Ռոբոտը գնաց մեջքարան, որտեղ մահճակալի մոտ, պատի կախիչից կախված էր Վիսենտի տաբատը: Վիսենտը սեղմեց մի քանի կոճակ եւս: Վահանակի էկրանին երեւացին ռոբոտի ձեռքերը, որոնք մտան տաբատի գրպանը եւ այնտեղից կտորից կտրված տուփ հանեցին: Առաջին հայացքից այն դատարկ էր: Ռոբոտը հետ եկավ ու Վիսենտը նրա ձեռքից վերցրեց տուփը: Ձեռքը խոթեց մեջն ու այնտեղից մետաղի մանր կտորներ հանեց: Հետո դրանցից մեկն ամրացրեց հեռուստացույցի կտրած լարին ու դրեց կափարիչը: Հեռուստացույցն սկսեց աշխատել: Ֆիլմն ավարտվել էր, եթեր հեռարձակվող հեռուստաալիքը հայտնում էր, որ «Ժամանակի գաղտնիքները» ֆիլմի մասին տեղեկատվություն կարելի է ստանալ համացանցից՝ այցելելով համապատասխան կայք: Վիսենտն անջատեց հեռուստացույցը, գրկեց ու տարավ դրեց իր նախկին տեղը: Նա հագավ կոշիկները, վերցրեց զխարկը:

– Զիսացրի: Ոչինչ: Սպասիր ինձ «Ժամանակի մեքենա»:

Վիսենտը դուրս եկավ: Նա երրորդ հարկում էր ապրում: Արագ իջավ աստիճաններով ու հայտնվեց փողոցի եռուզեռի մեջ:

Ծանապարհի եզրին կանգնած էր ամբողջությամբ կարմիր մեքենան մի մոտոցիկլ: Վիսենտը մեղավոր հայացք ձգեց նրա վրա: ԿՆԵՐԵՍ, ընդ մոռացել էի: Դու էլ իմ երկրորդ ընկերն ես:

Նա գրպանից հանեց բանալին ու գործի դրեց շարժիչը: Մոտոցիկլը տիպիկ ձայն հանեց: Վիսենտը դրանով սկսեց մոտ երկու կիլոմետր եւ կանգ առավ: Մոտակա շինության վրա գրված էր «internet club»:

Ներսում շատ այցելուներ կային: Վիսենտը սստեց համակարգիչներից մեկի դիմաց եւ փնտրեց գտավ այն կայքը, որտեղ տեղեկություններ կային իրեն հուզող հեռուստահաղորդման մասին: Ցավոք, շատ քիչ էին դրանք: Վիսենտն ինտերնետում գտավ հետաքրքիր մի նյութ այն մեքենայի մասին, որի գաղափարն իր ժամանակին տվել էր Իսահակ Նյուտոնը, եւ որը սակայն այդպես էլ կյանքի չէր կոչվել, մնացել էր սոսկ նախագիծ: Վիսենտը խնդրեց տպել իր համար բոլոր նյութերն ու գծագրերը, վճարեց ու դուրս եկավ: Նա վեր նայեց: Բարձրահարկերի գագաթները երկինք էին խոյացել: Չէ՞ որ սա Ամերիկան է: Ինչեքի՞ է հասնում մարդու մտքի թռիչքը: Վիսենտը, որ իրականում ֆիզիկոս-աստղագետ էր, այդպես էլ չդարձավ գիտությունների ակադեմիայի անդամ: Բախտը նրան չժպտաց, չնայած նա շատ գիտնականներից էլ խելոք էր:

Վիսենտի մտքերը խառնվեցին իրար, երբ մեկի ծայրը մտավ նրա ականջը: – Լսիր, ի՞նչ ես հավի մման կանգնել: Չէ՞ս լսում, մի ժամ է կանչում եմ: Հենց հիմա այդ ջարդված սկուտեղդ մի կողմ քաշիր: Չգիտե՞ս, որ այստեղ մեքենա կանգնեցնել չի կարելի, – գոռում էր ոստիկանը:

Գի համագզեստով մարդը:

(Յ.Ջ)

Վիսենտը քնից արթնացավ ու տեսավ, որ վերմակն ընկել է հատակին, իսկ ինքը քնել էր առանց հագուստը հանելու եւ քրտնած էր: Նա տորթեց աչքերն ու իջավ մահճակալից, վերցրեց վերմակը, դրեց մահճակալի վրա, բայց չհարդարեց, մի միտք նրան հանգիստ չէր տալիս: «Կրկին: Ինչո՞ւ այս երագն ինձ անընդհատ այցի է գալիս: Արդեն ուզում եմ մտածել, որ խելագարվում եմ»: Նա շտապեց խոհանոց, բայց շուտով հետ եկավ, որովհետեւ այնտեղ ուտելու ոչինչ չկար: Համկարծ նրա աչքերն անսովոր փայլեցին, ու նա տեղից վեր թռավ, ճռռոցով բացեց իր աշխատասենյակի դուռը, մերս մտավ, վերցրեց ռոբոտի հեռակառավարման վահանակը, որ դրված էր հենց ռոբոտի կողքին ու նրան հետը տարավ հյուրասենյակ: Նա նայեց բազմոցին, հեռախոսն այնտեղ էր, վերցրեց, հանեց նրա հիշողության սարքն ու մտքեց ռոբոտի վահանակի մեջ: Էկրանին գծագիր հայտնվեց: Այդ գծագիրը Վիսենտը վերցրել էր հեռուստատեսության համակարգից: Նա երկար նայում էր գծագրին: Այն շատ խառն էր ու առաջին տպավորությամբ շատ բարդ: Նորից գնաց իր աշխատասենյակ, մի մեծ թուղթ բերեց եւ փռեց ռոբոտի դիմաց՝ հատակին:

Նյուտոն, Նյուտոն: Դու չես հասցրել իրագործել: Ոչինչ, ես դա կանեն:

Վիսենտը ռոբոտի վահանակի վրա մի քանի կոճակ սեղմեց: Ռոբոտն սկսեց թրթի վրա խզբզել: Նա վերցրեց հեռախոսը, նայեց թրթին, ժպտաց ու տնից դուրս եկավ:

(Յ.Ջ)

Ոստիկանությունը ներս խուծեց: Տանը լռությունից բաց ոչինչ չկար: Բարձրացան երրորդ հարկ: Համկարծ լուսարձակում տեղի ունեցավ: Ոստիկանները կանգնեցին: Երբ լուսարձակումն ավարտվեց, նրանք ներս մտան: Սենյակի մեջ տեղում մի մեծ սարք էր կանգնած: Այն կազմված էր բազմաթիվ խողովակներից, լամպերից, լարերից, տարաներից, զսպանակներից ու միկրոսխեմաներից: Այդ բոլորը միանում էին մի հայելու, որը լուսարձակում էր: Այդ հսկա սարքը զբաղեցնում էր սենյակի համարյա կեսը: Սարքի դիմաց մի մարդ էր կանգնած: – Ձեռքերդ վեր, – գոռաց ոստիկաններից մեկը:

Մարդն արհամարհական բարձրացրեց ձեռքերը, կարծես գիտեր, որ իր հետելից վաղ թե ու չգալու են:

– Մենք տեղեկություններ ունենք, որ դու վրանագ մերկայացնող սարք ես ստեղծել եւ գաղտնի ես պահում: Դրանով խախտում ես մեր երկրի օրենքները:

– Սա հիմա կպայթի, – սառնասրտորեն ասաց մարդը: Ոստիկաններն ահով նայեցին իրար: Նրանցից մեկն ասաց. – Անջատիր սարքը: Մարդը շրջվեց եւ նայեց լուսամուտից դուրս: Կարծես վերջին անգամ էր տեսնում այդ ամենը ու իբր ցուցադրաբար հրաժեշտ էր տալիս: – Կարող եմ ձեզ մի բան խնդրել, – ասաց նա:

– Անջատիր, – գոռաց ոստիկանը:

– Սարքին ձեռք չտաք, – իր հերթին գոռաց մարդն ու նետվեց դեպի հայելին: Շլացուցիչ լուսարձակում եղավ:

Երբ լույսը հանդարտորեն նահանջեց, մարդն այլևս չկար: Նա անհետացել էր: Անհետացել էին նաեւ ոստիկանները:

(Յ.Ջ)

Վիսենտը թրմփոցով ընկավ հատակին: Նա թափ տվեց իրեն ու երազներից վերադարձավ հետ:

Գյուղի տանն էր: Լուսամուտից դուրս նայեց: Բակում կանգնած էր իր սեւ մոտոցիկլը: Նա մտազբաղ մտեց աթոռին: Իր երագանքն իրագործվել էր: Նա կարողացել էր ստեղծել այն մեքենան, որը դարձրեց շարունակ շատ ֆիզիկոսների երագանքն էր եղել:

Հիմա մտել էր իրն աթոռին ու բարձրաձայն մտորում էր:

– Ինձ նույնիսկ չփորձեցին հասկանալ, հագիվ խույս տվեցի ձերբակալությունից: Ես կանցնեմ, կգնամ, բայց իմ «Ժամանակի մեքենան» դարձրեց կապրի: Ահա իմ միջոցառությունը: Ինչեքի՞ միջով անցա: Ոչ, սա իմ աշխարհը չէ, ես այստեղ այլևս անելիք չունեմ, իսկ այնտեղ...

Վիսենտը վեր կացավ ու մոտեցավ «Ժամանակի մեքենայի» հայելուն: Մի պահ կանգնեց, շրջվեց, նորից լուսամուտից նայեց ու ձեռքը մոտեցրեց մեքենայի սեղմակներից մեկին:

Շլացուցիչ լուսարձակում տեղի ունեցավ...

Երբ լույսը մարեց, սենյակում արդեն ոչ ոք չկար:

ԱՐՄԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Սովորում է Ագարակի Եղիշե Զարեցի անվան միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանում

Կուրիսի անտառում

Երբ սկսվում են ամառային արծակուրդները, շատ երեխաների հետ մենք էլ ենք բարձրանում ավելի հով, ավելի զով Կուրիս գյուղը: Գողտրիկ ու հաճելի մի վայր է, որտեղ շուրջ բոլորը կանաչ է, թռչուններն էլ շատ են ու բազմատեսակ: Պապա շատ է սիրում շրջել գյուղի կանաչ սարերում ու անտառներում:

Սիրում է անվերջ լսել թռչունների հեքիաթային համերգը, գմայլվել բնության հրաշքներով:

(Յ.Ջ)

Օգոստոսյան մի շոգ օր էր: Պապիս բոլոր հինգ թռչուններն էլ տարբեր տեղերից եկել ու հավաքվել էին գյուղում: Այգու հետ կապված գործերը մի քիչ թեթևացել էին, եւ պապս որոշեց մեզ էլով տանել սար: Մեզից ամենափոքրին հորաքրոջս որդի Ռոբերտիկին եւ եղբորս՝ Հայկին, մտեցրեց էլին, իսկ ես, պապս ու հորեղբորս երկու աղջիկները Հասմիկն ու Մարգոն, ուղքով գնացինք: Ծանապարհը շատ հետաքրքիր էր ու հաճելի: Պապս այդ օրը շատ պատմություններ պատմեց:

– Այ, սարի եւ բարձր տեղը տեսնո՞ւմ եք, – ասաց նա, – Սոյուղն է: Այնտեղ թուրքեր են բնակվում, հիմա սահմանի այն կողմից հեռադիտակով հետեւում են մեզ: Երեխաներ, իսկ ծախ կողմում՝ Խոշլիումն է, այնտեղ մերոնք են, հայեր են: Նրանք էլ իրենց գյուղից թուրքերին են տեսնում:

– Պապի՞, – ասաց Հայկը, – թուրքերը մեզ վրա կկրակեն, արի հետ դառնանք:
– Հայկո, – ժպիտով ասաց

պապս, – մեր գյուղացիներից շատերն այստեղ կով ու ոչխար են արածեցնում: Այնպես որ, երեխեք, հանգիստ մնացեք: Հիմա ամեն ինչ խաղաղ է:

Հիմա գայլերն են վտանգավոր: Հրադարձից մինչ օրս այստեղ ոչ մի կրակոց չի եղել: Պատերազմի ժամանակ «Ալազան» սիպի հրթիռներով էին կրակում: Դրանց արկերի մի մասը հասնում էր Մեղրու եւ Լեհվազի կողմերը: Այդ արկերից եւ ոչ մեկն այստեղ չի պայթել:

Պապս այսպես գրույց էր անում, իսկ մենք բարձրանում էինք վերուկեր: Ինչքան ավելի էինք բարձրանում, այնքան մեզմից հեռանում ու փոքրանում էր առանց այն էլ փոքրիկ գյուղը, դառնում մի ափի չափ: Արդեն պարզ երեւում էին կողքի Գուղեմնիս գյուղը, Մեղրու հիվանդանոցի կողմի այգիները, որտեղ մի քանի շինություններ կային: Երեւում էր բաց հանքը, Վարդանի ձորի եւ Իրանի սարերը:

Անցավ մոտ մեկ ու կես ժամ, եւ մենք հասանք մեր նպատակակետը: Պապս շատ էր պատմել այս վայրերի մասին, բայց ուրիշ էր լսելը, բոլորովին ուրիշ էր տեսնելը: Մենք կանգնած էինք հսկա մի ձորի պռնկին, որտեղ ժայռերից կախված ծառեր կային: Ձորի միջով գետակ մի հոսում, որը գեղեցիկ ոլորներով դեպի հեռուն էր տանում իր բարակ ու արծաթագույն ջուրը: Մի քսաներեսուն մետր գետակի հոսքին համընթաց գնացինք, ու հանկարծ մեր ոտքի տակ հայտնվեց ցած գահավիժող փոքրիկ ու գեղեցիկ մի ջրվեժ: Ջրվեժից ներքեւ կարմրականաչ ջրիմուռներով ծածկված մի ծաղկահանդես էր: Մենք այդ ամենը, ինչպես ասում են, անմահացրինք ֆոտոսպլավների վրա:

Հետո մենք՝ տղաներս, ուրախ ուրախ սկսեցինք լողանալ գետակում, իսկ պապս աղջիկների հետ կանաչ խոտի վրա սեղան էր պատրաստում:

Դեռ մեր էինք սեղան մտել, մեկ էլ անսովոր մի ծայր լսվեց, որից մենք շատ վախեցանք, քարեր էին գլորվում մոտակա բարձունքից: Պապս բացատրեց.

– Եղնիկ է, իջել է ջուր խմելու: – Իսկ այստեղ շա՞տ կենդանիներ կան, պապ, – հարցրեց Ռոբերտը: Պապս հազաց ու հերթով սկսեց հաշվել.

– Գայլ, արջ, աղվես, նապաստակ, քարայծ, հովազ եւ էլի շատ ուրիշ կենդանիներ: Իսկ ամռանն այստեղ թռչունների հավաքատեղի է: Այստեղ լինում են արծիվներ, բազեներ, լոր, մոշահավ, մի խոսքով՝ հարյուր տեսակի թեսավորներ:

Կեղծորից հետո մենք ուրախ ուրախ վերադարձանք եւ երեկոյան հասանք գյուղ:

Այդ ամբողջ ճանապարհին ես մի բան էի միայն մտածում. «Ինչ լավ է, որ մի սարերում խաղաղություն է հիմա, եւ մեզ վրա չեն կրակում: Պապս իմաստուն է, ասում է՝ թուրքը չի կրակում եւ չի կրակելու այնքան, քանի դեռ մենք ուժեղ ենք»:



ՀԱՍՄԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ



Շնորհակալություն, բժիշկ



Առաջին անգամ սրտի աշխատանքի հետ կապված լուրջ խնդիր ունեցա 2008թ., երբ Կապանի հիվանդանոցի թերապեւտիկ բաժանմունքի բուժանձնակազմի ջանքերով ապահովվեց կենսական օրգանների աշխատանքը, մինչև Երեւանից հատուկ խմբի ժամանումը եւ ոչինչ կարգավորող ժամանակավոր սարքի տեղադրումն ու մայրաքաղաք տեղափոխելը: Ստացվեց այնպես, որ այս տարվա հունիսի 15-ին վիճակս կտրուկ վատացավ: Կապանի բժշկական կենտրոնի թերապեւտիկ բաժանմունքի վարիչ, սրտաբան Գայանե Այվազյանի բարձր պրոֆեսիոնալիզմի եւ օպերատիվության շնորհիվ վիճակս կայունացավ, եւ հնարավոր դարձավ սրտաբանական կենտրոնից վրա հասած հատուկ խմբի ուղեկցությամբ ինձ հասցնել Երեւան ու կարգաբերել կարդիոդեֆիբրիլյատորի աշխատանքը:

Իմ երախտագիտությունն եմ հայտնում Գայանե Այվազյանին այն ամենի համար, ինչ արել է, շնորհակալություն բուժքույրեր Մարինե Յուրանյանին, Նինա Յարոսլավնայանին, բաժանմունքի ողջ անձնակազմին:

ԱՐԹՈՒՐ ԲԱՐՍԱՍՐԱՆ
Կապան քաղաքի բնակիչ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ Երախտագիտությունն եմ հայտնում «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հեռուստալիզի բաժանմունքի բժշկուհի Ռիտա Մկրտչյանին եւ նրա անձնակազմին՝ Սլավիկ Գրիգորյանի առողջական վիճակի բարելավման եւ նրա նկատմամբ մշտապես ցուցաբերած հոգատար վերաբերմունքի համար:

Գեղանուշ Չարույանյան,
Կապան

Այունյաց երկիր
S U N I A C Y E R K I R . A M

Գլխավոր խմբագիր՝ ԷՁ Ծ1 Գ Է Ը ԵՕ ԺԵՁ ՍՍԶ ՍՍ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 06 28 02:
Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶՂ - ՇԱՆՈՒԹՅՈՒՄ» բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:

Րեգիստրացիայի օրվա համար՝ 01U 000231:
Թերթը տպագրվում է «Տիրապետության» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաբանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 29.07.2013թ.:



Սիսիանը կդառնա Մոնտեվիդեոյի քույր քաղաքների ակումբի անդամ

ՔՈՒՅՐ ՔԱՂԱՔՆԵՐ

Ֆրանսիայի Մոնտեվիդեո քաղաքի քաղաքապետարանի հրավերով յոթօրյա այցով Մոնտեվիդեոյում էր Սիսիան քաղաքի պատվիրակությունը՝ քաղաքապետ Աղասի Հակոբջանյանի ղեկավարությամբ: Մոնտեվիդեոյում պատվիրակությունը հանդիպեց Մոնտեվիդեոյի քույր քաղաքների ակումբի շրջանակում համագործակցող մյուս երեք քույր քաղաքի՝ ԱՄՆ Ռասինի, Իտալիայի Ռիվոլի եւ Գերմանիայի Ռավենսբուրգի ղեկավարների հետ: Աղասի Հակոբջանյանը պատրաստակամություն հայտնեց համագործակցել նաեւ այդ քաղաքների հետ:

«Մեր կողմից եղան մի շարք առաջարկություններ, որոնք շատ ջերմ ընդունվեցին, - ասում է Սիսիանի քաղաքապետը: - Առաջարկեցի, որ յուրաքանչյուր տարի ակումբը նախագահի մեկ քաղաք եւ ոչ թե Մոնտեվիդեոյում կենտրոնացնա այդ ղեկավարությունը, դա իմ կարծիքով ավելի կամրացնի բարեկամությունն ու կընդլայնի համագործակցության շրջանակները»:

- Այս այցով նախադրյալներ են ստեղծվում, որպեսզի Սիսիանը Մոնտեվիդեոյի քույր քաղաքների ակումբի լիարժեք անդամ դառնա, - ասում է ակումբի նախագահ ժան Կլոդ

Ումբերը: Սիսիանի հետ բարեկամական հարաբերություններ դեռ նոր են սկսվում, սակայն նա արդեն համոզված է շահելու եւ ակումբի բոլոր հինգ քաղաքները:

Հայկական կողմի, մասնավորապես Սիսիանի համագործակցությունն ամերիկյան եւ եվրոպական քաղաքների հետ կարելի էր եւ Մոնտեվիդեոյում հայկական համայնքի ջանքերով կազմավորված «Հայկական մշակույթ եւ հիշողություն» ասոցիացիայի անդամները:

- Սիսիանի հետ հարաբերությունները Մոնտեվիդեոյում բնակվող հայերին եւս մեկ անգամ հիշեցնել տվեցին մեր հայկական արմատների

մասին, - ասում է ժակ Տերտերյանը: Այս ավելացումն է. «Որպես օրինակ ասեմ, որ տղաս որոշել է այս տարվա սեպտեմբերին այցելել Հայաստան, եւ ես խնդրել եմ, որ անայցման ժամանակ Սիսիան»:

Նա կարելի էր Սիսիանի պատվիրակության հերթական այցը Մոնտեվիդեոյում համոզված լինելով, որ դրանով ապահովվում է բարեկամության կայունությունն ու շարունակականությունը: «Ոչ միայն մենք սովորեցնելու եւ տալու բան ունենք սիսիանցիներին, այլ նաեւ նրանք՝ Սիսիանի պատվիրակները, շատ բան ունեն մեզ՝ հայերի սովորեցնելու», - ասում է նա:

Սիսիան-Մոնտեվիդեոյի երկամյա համագործակցությունը շատ կարճ ժամանակում զգալի կլինի երկու քաղաքի համար էլ, համոզված է «Հայկական մշակույթ եւ հիշողություն» ասոցիացիայի նախագահ Ռեմոն Փանոսյանը: Հայկական համայնքն ընտրել է համագործակցության երկու ուղղություն, որոնք շահագրգիռ կողմերի ջանքերով արագ տեմպով են զարգանում:

«Բժշկական սարքավորումներով Սիսիանին օգնելն առաջին խոշոր ծրագիրն է: Սարքավորումների մի խմբաքանակ արդեն ճանապարհին է եւ կարճ ժամանակում կլինի Սիսիանում»:

Երկրորդ քաղաքացիների փոխայցելությունների ծրագիրն է, որ նախատեսվում է ժան Կլոդ Ումբերը: Իշխանությունները ղեկավարում են, քաղաքապետերը՝ հանդիպում, բայց քաղաքացիների փոխայցելությամբ եւ միմյանց կենցաղում եւ վարքուբարքում ուսումնասիրելով մույնպես կարող ենք նպաստել ժողովուրդների եւ քաղաքների բարեկամությանը»: - նշում է Ռեմոն Փանոսյանը: Սիսիանի պատվիրակությունը եղավ նաեւ Մոնտեվիդեոյի կրթական եւ մշակութային օջախներում, այցելեց հարակից մի շարք քաղաքներ ու պատմամշակութային հուշարձաններ:

ԱՐՄԵՆ ՀՈՎԱԿԻՅԱՆ

Ներքաղաքային ու ներմարզային երթուղիներում ուղեվարձի բարձրացում չի սպասվում առայժմ

ՀԱՆՐԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ

Տեղյակ եմ. ներմարզային եւ ներքաղաքային մնացել են անփոփոխ. այս պահի դրությամբ ուղեվարձը չի փոխվել եւ, կարծում եմ, չի փոխվի: Համեմայն դեպք մինչև այժմ տնտեսվարող սուբյեկտները ծանրակշիռ, հիմնավորված պատճառներ եւ առաջարկներ չեն ներկայացրել փոփոխության համար:

- Իսկ գազի բանկացումը չի՞ կարող պատճառ հանդիսանալ:

- Դա լուրջ հիմնավորում չէ, մասնավորապես չեն նորացվել տրանսպորտային միջոցները:

- Տրանսպորտային միջոցների նորացման դեպքում կարող էր են բարձրացնել ուղեվարձը:

- Ինքնուրույն չեն կարող. պետք է առաջարկություն ներկայացնել համապատասխան հանձնաժողովին, որը կքննարկի առաջարկը եւ կներկայացնի մարզպետին: Նման գործընթացներ կարող են տեղի ունենալ ներքաղաքային տրանսպորտում եւս, բայց, որքանով տեղյակ եմ, մարզի քաղաքապետարաններում ներկայումս նման հարց չի քննարկվում:

- Պարոն Աղաբեկյան, բայց կամայականություններ, անեն դեպքում, կան. ինչու՞:

- Երթուղիների մեծ մասում չկա մրցակցություն, որովհետեւ հանրա-



Արիկ Աղաբեկյան. ծնվել է 1959թ. Քաջարան քաղաքում: Ավարտել է Երեւանի գյուղատնտեսական ինստիտուտի գյուղմեքենայացման ֆակուլտետը, ստացել ինժեների որակավորում: 1996 թվականից աշխատում է Սյունիքի մարզպետարանում, այժմ մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի եւ ճանապարհաշինության բաժնի պետն է:

յին տրանսպորտի շահագործումը մարզում այնքան էլ շահութաբեր չէ. նկատի ունեն ներքաղաքային եւ ներմարզային տրանսպորտը: Որոշ

երթուղիներ մույնիսկ վնասաբեր են, ինչի համար էլ տնտեսվարող որեւէ սուբյեկտ չի ուզում սպասարկել այդ երթուղիները: Օրերով ուղեւորներ չեն լինում, երբեմն էլ 1-2 ուղեւոր: Նման երթուղիների թիվը հասնում է հինգի:

- Իսկ մարզային եւ քաղաքային վերահսկող մարմինները շահագործող կազմակերպությունների՝ շահերն են պաշտպանում, թե՞ ուղեւորների:

- Նախ՝ ուղեւորների:

- Միջմարզային երթուղու ուղեվարձը (կոնկրետ՝ Կապան-Երեւան երթուղու համար՝ 6000 դրամ) խելամի՞տ եք համարում:

- Ինչ խոսք, թանկ է: Ես համաձայն եմ, որ չկա լուրջ վերահսկողություն միջմարզային երթուղիների նկատմամբ:

Հարցազրույցը՝ Նինել Սարգսյանի

Խմբագրության կողմից

Ուղեւորափոխադրումների սակագների բարձրացման դեմ մայրաքաղաքում տեղի ունեցած հանրային ընդվզումից հետո մարզի շրջաններում ամենաքննարկվող հարցը, այնուամենայնիվ, վերաբերում է միջմարզային երթուղիների սակագներին, որոնք առանց նոր բարձրացման էլ մատչելի չեն: Օրինակ, Կապանից Երեւան կարելի է հասնել 6 հազար դրամով, Մեղրուց Երեւան՝ 7

հազար դրամով, Գորիսից Երեւան՝ 4 (որոշ դեպքերում՝ 4.5) հազար դրամով, Սիսիանից Երեւան՝ 3.5 հազար դրամով: Այդ սակագները, իհարկե, չեն վերաբերվում միկրոավտոբուսներին, որոնք համեմատաբար մատչելի սակագներ են առաջարկում:

Առհասարակ այս ոլորտում գնադրային սկզբունքները (ինչպես մեր կյանքի շատ ոլորտներում) պարզ չեն:

Խնդիր ունենք նաեւ ներմարզային ուղեւորափոխադրումների ոլորտում: Փաստորեն հինգ երթուղի չի սպասարկվում՝ 1. Գորիս-Վաղատուր-Խոզնավար, 2. Գորիս-Տեղ-Կորմիձոր, 3. Գորիս-Որոտան, 4. Սիսիան-Աշոտավան-Հացավան-Թասիկ-Արեւիս, 5. Սիսիան-Դաստակերտ: Եվ ճշված համայնքների բնակիչները դժվարություններ են ունենում շրջակա քաղաքների հետ հաղորդակցվելիս:

Հիշեցնեմ, միաժամանակ, թե ինչ սակագներ են ներկայումս կիրառվում մարզի համեմատաբար խոշոր քաղաքներում, քանզի ուղեւորափոխադրումների հարցը շարունակվում է մնալ օրակարգում, եւ չեն բացառվում նոր զարգացումներ: Այսպես՝ Գորիս քաղաքում գործում է երթուղային չորս գիծ, ուղեվարձը՝ 50 դրամ: Սիսիան քաղաքում գործում է երթուղային մեկ գիծ, ուղեվարձը՝ 50 դրամ: Կապան քաղաքում գործում է երթուղային ինը գիծ, այդ թվում՝ վեցը միկրոավտոբուսային, երեքը՝ ավտոբուսային: Միկրոավտոբուսների ուղեվարձը 100 դրամ է (բացառությամբ Կապան-Վաչագան երթուղու, որի ուղեվարձը 150 դրամ է): Ավտոբուսների ուղեվարձը 50 դրամ է (բացառությամբ Կապան-Վաղատուր երթուղու, որի ուղեվարձը 100 դրամ է):